ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Արկադի Բալյանի՝ 2020 թվականի փետրվարի 10-ից 15-ը Ճապոնիա (ք. Տոկիո)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Արկադի Բալյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ճապոնիա (ք. Տոկիո)՝ 2020 թվականի փետրվարի 10-ից 15-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) Վրաստանի գրասենյակի մշտական ներկայացուցիչ Էջիրի Յուկիհիկո:

5. **Գործուղման նպատակը.**

«Ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման բարելավում՝ աղետների ռիսկի կառավարման նպատակով» ծրագրի շրջանակներում հանդիպում-քննարկում:

6. **Քննարկված թեմաները.**

- «Ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման բարելավում՝ աղետների ռիսկի կառավարման նպատակով» ծրագրի շրջանակներում համատեղ քննարկվեց ճապոնական հարուստ փորձը, որպես աղետներին դիմակայելու լավագույն օրինակ,
- աղետների ռիսկի ուսուցման, կառավարման, հանրային իրազեկման բարձրացման, տեղեկատվության ճշգրիտ տրամադրման, ճգնաժամային կարողությունների զարգացման, ամրապնդման արդյունավետության բարձրացմանն ուղղված համատեղ գործողությունները,
- տեղեկատվության և հանրային իրազեկման բաղադրիչի առաջնային դերը ճգնաժամային իրավիճակներում բնակչությանը ճշգրիտ տեղեկատվություն հավաքագրելու և պատշաճ տրամադրելու գործընթացում,
- աղետների ռիսկի կառավարման բնագավառում բարձրացնել լրատվամիջոցների ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ կարողությունների մակարդակը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ս.թ. փետրվարի 13-ին կայացել են տարբեր ձևաչափերով բազմաթիվ հանդիպումներ (JICA)-ի համապատասխան ներկայացուցիչների հետ՝

- (JICA)-ի Արևելյան, Կենտրոնական Ասիայի և Կովկասի դեպարտամենտի գլխավոր տնօրեն Ֆուջիյա Կոջիի և նույն դեպարտամենտի տնօրենի տեղակալ Նակաոկա Յուսակուի հետ:

Վերոնշյալ հանդիպումների ընթացքում համատեղ քննարկվեցին կառույցների միջև առկա համագործակցային միջավայրի ընդլայնման, հեռանկարների զարգացման, հետագա անելիքների հստակեցման, նոր ծրագրային առաջարկների մշակման, ներդրման և իրականացման ուղղությամբ տարվող բանակցային գործընթացներին առնչվող խնդիրներ ու հարցեր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Երկուստեք համատեղ քննարկումների արդյունքում առաջարկվեց շարունակել ակտիվ աշխատանքները աղետների ռիսկի կառավարման ոլորտում ԱԻՆ տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով (JICA)-ի կողմից նոր ներդրումային ծրագրերի, ռազմավարական ուղիների մշակման, ներկայացման և համատեղ իրականացման հնարավորությունները, ինչպես նաև զարգացնել արտակարգ իրավիճակների բնագավառում փորձի փոխանակման, մասնագետների վերապատրաստման, ուսուցանման, թիրախային տարբերի խնդիրների լուծման, ԱԻՆ կարողությունների հզորացմանն ուղղված գործընթացները՝ վերահաստատելով հայ-ճապոնական գործընկերային կառուցողական համագործակցության պատրաստակամությունը՝ կառուցված արտակարգ իրավիճակների բնագավառում փոխշահավետ հարաբերությունների հիման վրա:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

18.02.2020թ.